ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/129

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամ
Բողոք բերող՝ «Աշկար» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ա. Պետրոսյանի,
«Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, թիվ 51 մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Աշկար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ վերացնել «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2020թ.-ի թիվ 21/3-5 արձանագրությունը, իսկ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամին պարտավորեցնել «ԱԱԳԱ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում կազմակերպել և իրականացնել գների նվազեցման միաժամանակյա նոր բանակցություններ՝ Գնումների մասին ՀՀ օրենդրությանը համապատասխան:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.12.2020թ.-ին:

23.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/129 համարի ծածկագիրը:

25.12.2020թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն 29.12.2020թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

29.12.2020թ.-ին, 12.01.2021թ.-ին և 22.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.01.2021թ.-ին:

2. **<u>«Աշկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Աշկար» ՍՊԸ-ն 23.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) 03.12.2020 թվականին հայտարարել է «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար՝ թիվ 51 մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է կայացրել հրավիրել բանակցություններ, մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկների արդյունքում Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Պատվիրատուն կայացրել և 18.12.2020 թվականին հրապարակել է որոշում Մասնակցի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ և սահմանվել է անգործության ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:(...):

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4 (...):

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: (...):

6. (...):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. (...):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: (...):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել

անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր

մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում.

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը.

1. Հանձնաժողովի 10.12.2020 թվականի թիվ 21/3-2 որոշմամբ հաստատվում է, որ «ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը գնահատվում է բավարար, որը հրապարակված է գնումների պաշտոնական տեղեկագրում (կցվում է):

2. Հանձնաժողովի 11.12.2020 թվականի թիվ 21/3-3 շտկված որոշմամբ և ի հայտ եկած հանգամանքներում պարզվում է, որ «ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա են թվաբանական սխալներ, մասնավորապես հաշվարկները սխալ են կատարված, որը հրապարակված է գնումների պաշտոնական տեղեկագրում (կցվում է):

3. «ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Օրենքով և Կարգով սահմանված ժամկետում կատարելով համապատասխան շտկումները էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին:

4. Հանձնաժողովի 15.12.2020 թվականի թիվ 21/3-4 որոշմամբ «ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը գնահատվում է բավարար և 17.12.2020 թվականի ժամը 12:00-ից մինչև 13:00-ն հրավիրվում է գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին մասնակցելու, որը հրապարակվում է գնումների պաշտոնական տեղեկագրում 18.12.2020 թվականին (կցվում է):

5. «ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պատշաճ ծանուցված և տեղեկացված չլինելով բանակցությունների անցկացման ժամի, օրվա, վայրի և անցկացման կարգի մասին, զրկվում է գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների մասնակցության իր իրավունքից:

6. Հանձնաժողովի 17.12.2020 թվականի թիվ 21/3-5 որոշմամբ ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «Քիմպաշտպանություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և սահմանվում է անգործության ժամկետ, որը հրապարակվում է գնումների պաշտոնական տեղեկագրում 18.12.2020 թվականին (կցվում է):

7. Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ընթացակարգի կազմակերպման և իրականացման ողջ ժամանակահատվածում Ընկերության էլեկտրոնային փոստին (մասնակցության հայտում նշված) ընթացակարգի վերաբերյալ ոչ մի ծանուցում, տեղեկատվություն չի ստացվել, Ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը միայն հասանելի է եղել Ընկերությանը գնումների պաշտոնական տեղեկագրից և հայտերի բացման նիստում թվով տասներեք մասնակիցների շրջանակներում նվազագույն գինը ներկայացվել է «ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

8. Օրենսդիրը հստակ սահմանել է այն ընթացակարգը, թե ինչպես պետք է իրականացվեն Հանձնաժողովի գործառույթները հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու պարագայում, որտեղ սահմանված չէ հայտերի գնահատման ժամկետի ընթացքում կամ դրանից հետո Հանձաժողովի կողմից կրկին որևէ գործառույթ իրականացնելու, այդ թվում՝ բանակցություններ հրավիրելու ոչ պատշաճ ծանուցման լիազորություն: Իսկ այդպիսի գործողությունների կատարման արդյունքում գործ ունենք հակամրցակցության և գնումների գործընթացի սկզբունքների խախտման հետ: Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի շրջանակում կայացված որոշումները, որոնք նախատեսված չեն օրենքով և անմիջական ազդեցություն են ունենում մասնակիցների ձեռնարկատիրական գործունեության սահմանափակմանը կամ խտրական մոտեցմանը

հանդիսանում են հակամրցակցային, և ի թիվս նշվածի յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է անդրադառնալ իրավիճակային խնդրի կարգավորման նախադեպերին, որպեսզի հնարավոր լինի ապահովել ոչ խտրական մոտեցումը:»:

Ելնելով վերոգրյալից, «Աշկար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերացնել «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2020թ.-ի թիվ 21/3-5 արձանագրությունը, իսկ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամին պարտավորեցնել «ԱԱԳԱ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում կազմակերպել և իրականացնել գների նվազեցման միաժամանակյա նոր բանակցություններ՝ Գնումների մասին ՀՀ օրեսդրությանը համապատասխան:

3. <u>«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/19389-2020 գրությամբ դիմել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Աշկար» ՍՊԸ-ի կողմից 23.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 23.12.2020թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)» հիմնադրամի կողմից սույն թվականի դեկտեմբերի 3-ին կազմակերպվել է ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով մրցույթ գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Մրցույթի ընթացքում

օրենքի սահմանված կարգով բոլոր մասնակիցները ծանուցվել են armeps համակարգի միջոցով (կից armeps համակարգից արտատպված պատճեները):

Գների նվազեցման բանակցությունների արձանագրությունը հրապարակվել է gnumner.am պաշտոնական կայքում:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն 29.12.2020թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 12.01.2021թ.-ին հրավիրված նիստին, բանավոր և գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/129 ծածկագրով բողոքը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Գնումների մասին» «ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր

ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

(…)

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

(…)

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

(…)

Այսպես «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ»-ի կարիքների համար մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2020թ. թիվ 3-4 արձանագրության համաձայն՝ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար և վերջինիս 17.12.2020թ. հրավիրվել է միաժամանակյա բանակցությունների:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին 17.12.2020թ. հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.12.2020թ. Համակարգի միջոցով ուղարկվել է միաժամանակյա բանակցությունների նիստի վերաբերյալ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» վերնագրով ծանուցում՝ ստացողներ դաշտում նշելով մասնակիցների «բոլոր ՏՕ-ի ՊՊ-ներին կցագրված ողջ ադմինը» և «ՄՀ-ին կցագրված բոլոր ՊՊԳՊ օգտվողները»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդեն 17.12.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն՝ հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն և «ՆԱԽՇԻՆ» ՍՊԸ-ն և արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

Հաշվի առնելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները գտնում ենք, որ սույն գործով առկա փաստական հանգամանգները մեկնաբանվում են ի օգուտ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ին, մասնավորաես «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ»-ի կարիքների համար մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 15.12.2020թ. բոլոր մասնակիցներին, այդ թվում նաև «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ին ուղարկվել է նամակ, այսինքն «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ին ծանուցված և պատշաճ կերպով տեղեկացված է եղել 17.01.2020թ. ժամը 12:00-13:00-ին հրավիրված բանակացությունների նիստի վերաբերյալ և զրկված չի եղել իր իրավունքներն իրացնելու օրենքով իրեն վերապահված հնարավորությունից:

Մինևույն ժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածը բողոքաբերի վրա է դնում պարտականություն ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը ներկայացնելիս, ներկայացնել նաև դրանց ապացույցները, մինչդեռ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն որևէ կերպ չի ապացուցել գնահատող հանձնաժողովի կողմից իրեն միաժամանակյա բանակցությունների նիստի վերաբերյալ ծանուցում չուղարկելու փաստը, ավելին, առկա չէ նաև հստակ ապացույց ՍՊԸ-ի կողմից այդ ծանուցումը չսանալու վերաբերյալ, իսկ

բողոքաբերը սահմանափակվել է միայն բանավոր պնդմամբ: Միևնույն ժամանակ, գործում առկա փաստերը վկայում են և ապացուցում, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.12.2020թ. համակարգի միջոցով ուղարկվել է միաժամանակյա բանակցությունների նիստի վերաբերյալ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» վերնագրով ծանուցում ստացողներ դաշտում նշելով մասնակիցների «բոլոր ՏՕ-ի ՊՊ-ներին կցագրված ողջ ադմինը» և «ՄՀ-ին կցագրված բոլոր ՊՊԳՊ օգտվողները»:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նույն «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ»-ի կարիքների համար հայտարարված մեկ այլ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների դեմ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից նորից ներկայացվել էր բողոք նույնաբովանդակ հիմնավորմամբ, որի վերաբերյալ 12.01.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը կայացրեց որոշում, ըստ որի «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/105 ծածկագրով բողոքը մերժվեց ամբողջությամբ:

Այսպիսով, վեյագրյալ հիմնավորումներով պայմանավորված, գտնում ենք, որ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/129 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թիվ 51 մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարվել է «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աշկար» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 21/3-3 արձանագրության համաձայն՝ «Աշկար» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվում (Հավելված 2.1) առկա են եղել թվաբանական սխալներ:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 11.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել «Աշկար» ՍՊԸ-ի armeps.am համակարգում գրանցված՝ pauk63@rambler.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

vi. Հանձնաժողովի 15.12.2020թ.-ի նիստի թիվ 21/3-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ ոչ գնային պահանջները բավարարող մասնակիցներին հրավիրել է առաջարկված գների շուրջ միաժամանակյա բանակցությունների:

viii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 15.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցում է ուղարկվել «Աշկար» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի՝ pauk63@rambler.ru հասցեին, որով հայտնել է, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվում են միաժամանակյա բանակցությունների՝ 17.12.2020թ.-ին ժամը 12:00-ին:

ix. Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 21/3-5 արձանագրության համաձայն՝ 17.12.2020թ.-ի բանակցային գործընթացին ներկա են գտնվել «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 28.924.920 ՀՀ դրամի գնային առաջարկի նվազեցում և «Նագշին» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 28.925.400 ՀՀ դրամի գնային առաջարկի նվազեցում, ինչով պայմանավորված ընտրված մասնակից է ճանաչվել «Քիմպաշտպանություն» ՍՊԸ:

x. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից որպես ԳԲՔԱ-ՆԳ-2020/105 ծածկագրով որոշմամբ հաստատված հանգամանք նշվել է, որ «Աշկար» ՍՊԸ-ի armpes.am համակարգում որպես էլեկտրոնային փոստի հասցե նշված է pauk63@rambler.ru:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Աշկար» ՍՊԸ-ի կողմից 23.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված

հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամի կողմից թիվ 51 մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ

գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Հրավերի 8.18-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով համակարգի միջոցով armeps.am համակարգում գրանցված կազմակերպությունների էլեկտրոնային փոստի հասցեներին

միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Ամբողջացնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ եթե գնման ընթացակարգն իրականացվում է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, ապա Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի՝ www.armeps.am միջոցով՝ Մասնակցի Armeps համակարգում գրանցված էլեկտրոնային փաստի հասցեին, իսկ մասնակցի կողմից Հանձնաժողովին և (կամ) պատվիրատուին ուղղված գրությունները (ծանուցումները) ուղարկվում են՝ Մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստից՝ հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ.-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

3) մասնակից (համակարգում՝ տնտեսական օպերատոր)՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով էլեկտրոնային գնմանը մասնակցելու ցանկություն ունեցող և համակարգում գրանցված մասնակից.

4) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող առաջարկ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/ հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թիվ 51 մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2020թ.-ի նիստի թիվ 21/3-3 արձանագրության համաձայն՝ «Աշկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչ մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 11.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցում է ուղարկվել «Աշկար» ՍՊԸ-ի armeps.am համակարգում գրանցված՝ pauk63@rambler.ru

էլեկտրոնային փոստի հասցեին: Հանձնաժողովի 15.12.2020թ.-ի նիստի թիվ 21/3-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված ոչ գնային պահանջները բավարարող մասնակիցները հրավիրվել են առաջարկված գների շուրջ միաժամանակյա բանակցությունների, ինչ մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 15.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցում է ուղարկվել «Աշկար» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի՝ pauk63@rambler.ru հասցեին, որով հայտնել է, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվում են միաժամանակյա բանակցությունների՝ 17.12.2020թ.-ին ժամը 12:00-ին: Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 21/3-5 արձանագրության համաձայն՝ 17.12.2020թ.-ի բանակցային գործընթացին ներկա են գտնվել «Քիմպաշտպանություն» ՍՊԸ-ն և «Նագշին» ՍՊԸ-ն: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից որպես ԳԲՔԱ-ՆԳ-2020/105 ծածկագրով որոշմամբ հաստատված հանգամանք նշվել է, որ «Աշկար» ՍՊԸ-ի armpes.am համակարգում որպես էլեկտրոնային փոստի հասցե նշված է pauk63@rambler.ru:

Գործում առկա վեճի առարկա հանդիսացող ծանուցման համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 15.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցում է ուղարկվել «Աշկար» ՍՊԸ-ի armeps.am համակարգում գրանցված էլեկտրոնային փոստի՝ pauk63@rambler.ru հասցեին, որով հայտնել է, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվում են միաժամանակյա բանակցությունների՝ 17.12.2020թ.-ին ժամը 12:00-ին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, այն է՝ մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու պայմաններում կասեցրել է հանձնաժողովի նիստը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա,

ժամի և վայրի մասին, որը պետք է վարվի ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը, ինչը և կատարվել է Հանձնաժողովի կողմից, պահպանելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Հրավերի 8.16-րդ կետով սահմանված պահանջները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 17.12.2020թ.-ին կայացված թիվ 21/3-5 արձանագրությամբ կայացված որոշումն իրավաչափ է, որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթները, ինչի պայմաններում «Աշկար» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Աշկար» ՍՊԸ-ի կողմից 23.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/129 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**